



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3-55

Q26217h21 46564

Lucy

574

№122

~~№356~~

~~365~~

~~226~~ 2 200 9



~~#356~~

226

Състѣнъ чесч



17 JUL 2008

81  
Linn  
574  
exp.

## ԱՆԱՆԻԿԱ ԿԱՏԱԿ

ԿԱ.ՏԱ.ԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՄԵԿ ԱՅՆ.ՎԵՐԱԿՐՈՒԺՄԱՆ



•Փոխադրեց Ռուսերէնից

## Պ. Չմշկեանց

40380

1945

Φ Η Θ Ι Η Ο



1879

8005 JUL 1

# ԹԱՅՐ ԺԱՄԱՆԱԿ



Дозволено Цензурою. Тифлисъ, 8 Октябр. 1879 г



№ 572

574-2009

Тип. И. Мартиросянца, на Орбеліан. ул. д. № 5

## ԵՎԵՆԻԿԻ ԿԱՏԵԿ

ԿԱՏԱԿՆԵՐԳՈՒԹԻՒՆ. ՄԵԿ Ա.ԲԱ.ԲՈՒ.ԾՈՎ.

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳԵՂԻԳ. ՇԱՄՇԱԴԻՆԵՍՆ, ուսուցիչ	30 տարեկ.
ԵՊԻՍՈ.ԲԵԹ, նորա կինը,	18 "
ԼԵՅՆԻԳ ՊՈԽՃՊՈՒՆԵՍՆ, նորեկ երիտա-	
սարդ արտասահմանից,	25 "
ԿԱՐԱ.ՊԵՏ Դ.ԶԱ.ԽԵՅՅԻ, ծառայ:	17 "

Անց ըստ պատշաճում է թիֆլիսում:

Հերբնկալութեան սենեակ, մէկ գուռ մէջուղը: Յուշա-  
բարեց աջ մէկ սպասուհան և մէկ գուռ: Դաշնամոյք, գե-  
ւան, սեղան, աթոռներ, զբանեղան:

### ՏԵՍԻԼ ԱԲ

ԳԵՂԻԳ, նստած է սեղանի մօտ և գրում է:  
ԵՊԻՍՈ.ԲԵԹ կիսովում է հայելու առաջ.

ԳԵՂԻԳ, կարդալով,  
Եւ որովհետեւ մարմինը . . .

ԵՊԻՍՈ.ԲԵԹ, ընդմիջելով,  
ի՞նչ մարմի՞ն:  
ԳԵՂԻԳ, շարունակելով.  
Եւ որովհետեւ մարմինը . . .

ԵՂԻՍՈՒՅԵԹ

ի՞նչ մարմին, ինչե՞ր ես երազում:  
Գէ՛լորդ, թողնելով գոել.

Եղիսաբեթ, հոգիս, վերջ կը լինի թէ ո՛չ . . .  
Ես պարապում եմ այստեղ գործով, շտապում եմ  
վերջացնել շուտով, իսկ դու արգելում ես, ի՞նչ ես  
կամենում, ասա ինդքսմ: Միթէ մի քանի րոպէ  
հանդարտ կարող չես մնար

ԵՂԻՍՈՒՅԵԹ

Հանդարտ . . . ի՞նչքան ժամանակ:  
Գէ՛լորդ.

Մէկ ժամ միայն . . .

ԵՂԻՍՈՒՅԵԹ

Այդ շատ շատ է:  
Գէ՛լորդ.

Թող կես ժամ լինի . . .

ԵՂԻՍՈՒՅԵԹ

Այդ էլ շատ է:  
Գէ՛լորդ.

Աւելի քիչ:

ԵՂԻՍՈՒՅԵԹ

Հինգ րոպէ կարելի է:  
Գէ՛լորդ.

Բաւական է . . . ինդքսմ, բաւական . . .

ԵՂԻՍՈՒՅԵԹ

Ճշմարիտ է, չպէտք է արգելել, մարդը ուսուցիչ  
է, գաս է պատրաստում, (Անցնում է ընկի միւս կողմը և նստում է հանդարտ, ժամանակ առ ժամանակ անհամբերութիւն է ցոյց տալիւ)

Գէ՛լորդ, կարգում է.

Իսկ որովհետեւ մարմինը գոյանում է զանազան  
հիւթերից, և ամեն մէկը այդ հիւթերից ունի իւր  
առանձին էութիւնը և նշանակութիւնը ամբողջի  
համար . . .

ԵՂԻՍՈՒՅԵԹ

Գէ՛լորդ, հոգիս:

Գէ՛լորդ.

Վերցնենք զորօրինակ ջուրը . . .

ԵՂԻՍՈՒՅԵԹ

Հինգ րոպէ վաղուց անցաւ:  
Գէ՛լորդ, ցեղով գելքը մէկ կորմը.

Զէ, վերջապէս այդ պատիճ է:

ԵՂԻՍՈՒՅԵԹ

Շատ հետաքրքիր բան է, ճշմարիտ, դու այդ-  
ուղղ փնթփնթա' քթիդ տակից, իսկ ես պիտի  
լուս նստիմ:

Գէ՛լորդ.

Փնթփնթա', փնթփնթա'. իսկ երբ դասերից կը  
զրկուիմ, տեսնենք ի՞նչ կը լինի այն ժամանակ:  
ԵՂԻՍՈՒՅԵԹ

Մէկ քանի ժամ չպարապելով իր թէ կարելի  
է դասերից զրկուիլ:

Գէ՛լորդ.

Հաւատացնում եմ կարելի է . . . Ո՞ւր է, երա-  
նի՞ չը լինի որ ես էլ ուրիշի պէս հօրից թողած  
ժառանգութիւն ունենայի, ինչպէս այն քրանոը,  
ինչպէս է նրա ազգը, մէկ խօսքով ա'յ էն իծամի-  
րուքը որի շնորհքով ես արժանացայ քո ամուսինդ  
դառնալ:

ԵՂԻՍԱԲԵԹ

Մօսիօ Պուճպուճեան:

Գէ՛լրդ:

Պուճ պուճ է, ինչ զահրումար է. նա որ ուղում  
էր նշանուել քեզ հետ և որի ձեռքից ես քեզ ա-  
զատեցի, 0՝ եթէ ես նրա կարողութիւնը կ'ունե-  
նայի . . .

ԵՂԻՍԱԲԵԹ

Այս ժամանակ, ես հաւատացած եմ, աւելի խե-  
լօք կը լինէիր և զանազան մարմինների ետելց չէիր  
ընկնի: Դու չես սխալում, Գէ՛լրդ, զիտես այդ պա-  
րոն Պուճպուճեանը սիրահարուած էր ինձ վրայ և  
իմ մայրս քիչ էր մնում համաձայնի ինձ նրան  
տալ, բայց . . .

Գէ՛լրդ:

Բայց դու . . .

ԵՂԻՍԱԲԵԹ

Ես այդ ժամանակ սիրում էի մէկ ուրիշ երիտա-  
սարդի, որ միշտ գրում է զանազան մարմինների,  
հիւթերի ու սորա նման սքանչելի առարկանների  
վրայ, իսկ կնոջը չէ սիրում և միշտ մոռանում է  
նորան:

Գէ՛լրդ:

Ինչպէ՞ս, ես քեզ չե՞մ սիրում:

ԵՂԻՍԱԲԵԹ

Ես քեզ վրայ չեմ խօսում, Հը՝, բռնուեցար:

Գէ՛լրդ:

Լսիր, Եղիսաբեթ, որ ես քեզ սիրում եմ ու շատ  
եմ սիրում, դորանում կատկած չկայ, և դու ինքդ  
այդ լաւ զիտես, բայց իմ պարապմունքներս ար-

գելում են ինձ միշտ օեղնով պարապիլ:

(Մտնում է ծառան.)

ԿՈՐԱՊԵՏ

Աղա՛, մի ինչ որ թուղթ են պիրէ (այս ան-  
գիտական գումարայում)

Ի՞նչ թուղթ, ումի՞ց:

ԿՈՐԱՊԵՏ

Հլէ ասում ա որ խանումի ախպէրն ա յղարկել:

ԵՂԻՍԱԲԵԹ

Իմ եղբա՞յրը:

Գէ՛լրդ:

Տուր տեսնեմ: (Ունում է նամակը:) Տեսնենք ի՞նչ  
է գրում . . . զնա փայտ բեր, բուխարը վառիր:

ԿՈՐԱՊԵՏ

Հլէ սհաթին: (Ուրս է զնում) Տեսնենք ի՞նչ

ԵՂԻՍԱԲԵԹ

Տուր ես կարդամ:

Գէ՛լրդ:

Կարդանք միասին: (Գրելով Եղիսաբեթին կարդում  
են.) «Եղիսաբեթ Գէ՛լրդ, շուտով արի ինձ մօտ. Պետ-  
րոսեանը այստեղ է և մենք երեքով պիտի վճռենք  
միասին թէ ինչպէս է հարկաւոր մեզ վարուիլ այն  
գործի մէջ, որը մեզ երեքիս համար էլ չատ հետա-  
քրքիր է»: (Կանչում է.) Կարապե՛տ,

ԵՂԻՍԱԲԵԹ

Շարունակի՛ր:

Գէ՛լրդ:

Չեմ ուզում:

ԵՂԻՍԱԲԵԹ

Ինչպէս թէ չես ուզում:

ԳԵՐՈԳ. ուշին հմայ մա և առաջ  
Որովհետեւ վերջացրի: (Առաջնորդ)  
ԵՎԻՍՍՈԲԵԹ

Հա. էդ ուրիշ բան է:  
(Կարապետը մոնում է փայտը խոտին:)

ԳԵՐՈԳ.  
Կարապետ, բե՛ր պալտօս և գդակու:

ԿՈՐԱՎԵՏ, ու անուն է  
ՀԼԵ սհաթիս:

ԳԵՐՈԳ.

Ես կարծեմ զու այդ յիմար «ՀԼԵ և Իհա» աւե  
քան չես իմանում . . . Ես կ'երթ մասսամ կի՞ կը  
վերադառնամ, իսկ զու մինչ իմ . . . Կարող  
ես կարդալ, երգել, ինչ կամենամ: ( պետք ըե-  
րում է պալտօն ու զդակը, հաղցնում է ԳԵՐՈԳԻՆ ու յե-  
տոյ մօտենում է բուխարին: )

ԵՎԻՍՍՈԲԵԹ:

Զոտուանաս իմ ողջոյնս և ասա մօրս որ ես վաղը  
կը տեսնուիմ նրա հետ:

ԳԵՐՈԳ.  
Փայտս . . .

ԿՈՐԱՎԵՏ, վազելով դէսի դուռը ի միանի  
ՀԼԵ սհաթիս:

ԳԵՐՈԳ.  
Յատեսութիւն, հոգիս . . .

ԵՎԻՍՍՈԲԵԹ:

Յուտով վերադարձիր իմդրեմ, թէ ոչ ես կը  
տիրեմ:

ԳԵՐՈԳ.  
իսկոյն կը դառնամ: (Կարապետն դաներում: ) Մին-

չն իմ գալը սամավարի պատրաստութիւն տես:  
ԿՈՐԱՎԵՏ

ՀԼԵ սհաթիս, աղա՝ ջան:

ՏԵՍԻԼ ՉԵՐ

ԵՎԻՍՍՈԲԵԹ ԵՒ ԿՈՐԱՎԵՏ

ԿՈՐԱՎԵՏ, բուխարի մօտ:

Ժմորթիս էս քաղաքը հիւրած կ'երթայ  
չն Ղաղախայ ամայքերում կ'ապրի . . . համա Սղօէնց  
Ալմաստը որ միտս ա գալի, հլե ուզում եմ պուկ  
գամ ըստեղից: —

ԵՎԻՍՍՈԲԵԹ, որը նայում էր պատուհանում, զաւեալով  
Դ Ի՞նչ ես քեզ ու քեզ խօսում այդտեղ:

ԿՈՐԱՎԵՏ

ՀԼԵ սհաթիս կը վառեմ բուխարին, խանում ջան:  
ԵՎԻՍՍՈԲԵԹ:

Դեռ հարկաւորութիւն չկայ, տաք է:

ԿՈՐԱՎԵՏ

Աղէն մրսում ա:

ԵՎԻՍՍՈԲԵԹ:

Քիչ խօսիր:

ԿՈՐԱՎԵՏ

ՀԼԵ սհաթիս, խանում ջան, մի կզնուի, (Ամլում  
է զանդի ձայն: )

ԵՎԻՍՍՈԲԵԹ:

Կարծեմ մեր դրան զանդն են խփում:

ԿՈՐԱՎԵՏ

Խաբար չեմ:

ԱԵՐ ՊՐԱՆՆ Է:

ԿԱՐԱՊԵՏ

ՀԵՅՄ', հիլ արա' թակին . . . էնա որ լաւ կը  
թակեն կ'երթամ բաց կ'անեմ . . . չըլի թէ քուշի  
խօխէքն են: (Նորից լալում է զանդի ձայնը:)

ԵՐԻՍՈՒԹԵԹ

Դարձեաւ՝ . . . գնա' դուռը բաց արա:

ԿԱՐԱՊԵՏ

ՀԵԼՇ սհաթիս . . . էտ խօսէքը չեն, ինչոր մին-  
ձաւորի զրընդպրնգաց: (Վնում է մնչեւ դուռը,  
դուռնայելով.) Բահ, քածր բաց է արել . . .

ԵՐԻՍՈՒԹԵԹ

Ո՞Դ Է:

ԿԱՐԱՊԵՏ

ՀԵԼՇ մին ինչ որ մարդ ա:

ԵՐԻՍՈՒԹԵԹ

Ի՞նչ մարդ է:

ԿԱՐԱՊԵՏ

Խաբար չեմ:

ԵՐԻՍՈՒԹԵԹ

Ծանօթ թէ անծանօթ:

ԿԱՐԱՊԵՏ

Ըսխին հայի սփաթ չկայ. ուրիշ զայտի մարդ ա  
ըրեռում. աչկերը շուշիցն ա, խանում ջան, թէլի  
վրայ կախ տուած:

ԵՐԻՍՈՒԹԵԹ

Երեի գէորգին է ուզում տեսնել, ասա' որ տա-  
նը չէ: (Վնում է ձախ կողմի դռնով:)

ՏԵՍԻԼՅՅԵՐ

ԿԱՐԱՊԵՏ և ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

ԿԱՐԱՊԵՏ, նայելով դքան,  
ինչ խլէպուզ զատ ա, հէնց էն ա նի ա քշում հա՛:  
(Հեռանում է բուխարի մօտու)

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ, մանելով.

Ոչ ոք . . . այդ լաւ բան է: (Նայելով դէս ու դէս:)  
Ա՛, վատ չէ, լաւ է, լաւ է . . .

ԿԱՐԱՊԵՏ, առանձին.

Ես ասեմ, սա էն շուն խաղացնողներից պտի ը-  
մի . . . մօտ գնանք, հը՛մ հը՛մ . . .

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ, անսնելով կարապետին.

2 C'est quelque chose comme un dommestique, bon.

ԿԱՐԱՊԵՏ

ԽԵՐ ԸԼԻ, աղա . . .

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Ի՞նչ ասի՛ր . . .

ԿԱՐԱՊԵՏ

ՀԵԼ ԽԵՐ ԸԼԻ . . .

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Այդ ի՞նչ բարբառ է . . .

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչն ա բարեբար . . .

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

C'est un imbécile, յիմար:

ԿԱՐԱՊԵՏ

Զէ, սա էն օլքցի ա ըրեռում:

ԿԱՐԱՊԵՏ

ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Երեսւմ է, պատուելի, որ դու յիմար ես . . .  
ԿՈՐՈՊԵՏ

Հիէ՛, հիէ՛ . . . ինչ զարբին առ խօսում:  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ բարեկայլ շնչ

Տիկինը տա՞նն է . . . (առն կըսոյ առ անունը)  
ԿՈՐՈՊԵՏ

Ի՞նչ տիկ, աղա . . . առ չի  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Տիկին Շամշատնեան, յիմար . . .  
ԿՈՐՈՊԵՏ

Խանումը . . . ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Յիմար, բարբարոս . . . (Ամենի լորով)  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ պուտեստոսուն ԿՈՐՈՊԵՏ

Չէ, խաչով տուած ա . . .  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Կը վերջապէս, տա՞նն է քո խանումը:  
ԿՈՐՈՊԵՏ

Հրէն, իր սրահումը . . .  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Իսկ պարո՞նդ . . .  
ԿՈՐՈՊԵՏ

Աղէն գնացել ա: . . .  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Seule, bien, զնա և անա տիկինին որ պարոն  
Պուտեստումնեան է: (Ամենի լորով)

Կը առ լուսութան կամ առ անունակամագի  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Պուտեստումնեան . . . (Առն անձնին) Հիէ անուն հա: (Գը-  
նում է և դաստիար է) Աղա՛, ասեմ որ կամեղի բան

Էս բիրել . . . ԾԱՌԱՋԱՋԱՋԵԱՆ

Անասելի յիմար, զնա՛, քեղ ասում եմ, յայտնիք  
տիկինին որ ես սպասում եմ: Ոչ հաս ա չէ  
ԿՈՐՈՊԵՏ

Հիէ սհաթիս: (Առն ձեմին, զնալուլ.) Գալուդ ճան-  
բան նղովիլի հա՞ . . .  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ, մենակ.

Ի՞նչ երկիր, ի՞նչ մարդիկ . . . Այստեղ մարդ  
կարող է գժուիլ, մոռանալ իրան . . . բարբարոս-  
ներ, բարբարոսներ:

ԿՈՐՈՊԵՏ, դառնալուլ.

Ասիւ  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Յետ յետոյ, ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

ԿՈՐՈՊԵՏ

Հիէ ասի էլի: . . . Վայ վասի  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Բայց յետոյ: . . . Վայ վասի  
ԿՈՐՈՊԵՏ

Էլ ինչ յետոյ, էն ա լօխէլ ասի էլի: Վայ վասի  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Բայց ի՞նչ պատասխանեց: Ն ան նույսամագի  
ԿՈՐՈՊԵՏ քիրակ չ յամաց մասի

Ասաւ որ մի քիչ տիւր անես:  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Ի՞նչ ձեռվ ասիր:

ԿՈՐՈՊԵՏ

Հիէ դուզ դուզ ասի թէ փէտնց խօփեն ա . . .

ՊՈՒՇՊՈՒԺԵԱՆ  
Սյսինքն Պուճպուժեանն, յետո՞յ . . .  
ԿՈՐԱՊԵՏ  
Էն ա ասի էլի . . .  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ  
Իսկ նա . . .  
ԿՈՐԱՊԵՏ  
Նա էլ ասաւ հիլա տիւր անի:  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ  
Je n'e comprends pas: Երբ մտար նրա մօտ, նա  
ԲԽէ էր շինում: Հայոց լուսուն վկանք չ բայալ  
ԿՈՐԱՊԵՏ  
Գիր էր կարդում . . .  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ  
Դիցուք դու ասիր «պարոն Պուճպուժեան», նա  
Իսկոյն երեխ շփոթուցաւ:  
ԿՈՐԱՊԵՏ  
Իսկի էլ չէ . . .  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ  
Հմ, ի՞նչ արաւ ուրեմն:  
ԿՈՐԱՊԵՏ  
Նստեց . . .  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ  
Երեակայում եմ թէ ինչքան կը շփոթուէր որ իս-  
կոցն ընկել է բազկաթուի վրայ:  
ԿՈՐԱՊԵՏ  
Խի՞էր ընկնում, էն ա նստեց էլի:  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ  
Նստեց երեխ այսպէս (Ի՞նկնում է արագեական  
ձևով աթոռի վրայ):

ԿՈՐԱՊԵՏ  
Իսկի էլ չէ, հաենց իմ՝ նստում. Էն ա լազաթին  
Նստեց էլի:  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ  
Հմ, լաւ, հեռացի՞ր,  
ԿՈՐԱՊԵՏ  
Հմէ սհաթիս, էս ա խանումն էլ գալիս ա:  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ  
Լաւ, ուրեմն հեռացիր. c'est elle, ça commence.  
ՏԵՍԻԼ 4րդ  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ և Եղիսաբեթ խորոշ  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ  
Devant les gens, ծառայից կարող էր պահիւ,  
բայց իմ առաջ տեղ ա տեղ, վախենում եմ և ու-  
րախանում միևնոյն ժամանակի: Օ՛ բախտ, ի՞նչ  
երջանիկ եմ . . . բայց պիտի մեծահոգի լինիմ . . .  
խեղճ կին, մօտենում է սարսափելի րոպէն: (Եղի-  
սաբեթը մտնում է շատ ընական և հանդարտ ձեռով:)  
ՊՈՒԺՊՈՒԺԵԱՆ, առաջ վաղելով.  
Լիդ . . . (Բայց նկատելով նրա սասնութիւնը)՝  
մաղամ լիդ . . .  
ԵՎԻՍԱԲԵԹ  
Ա . . . Պարոն Պուճպուժեան . . . ո՞վ կը-  
պասէր, վաղո՞ց է ինչ եկել էք: (Ուսանձնեն), Ի՞նչ-  
պէս հարցնեմ թէ ինչու համար, ամօթ էւ: (Ծորան).  
Նստեցէք, խնդրեմ . . . ի՞նչ է պատահել . . .  
կարծես մեխած լինիք ձեր տեղը, նստեցէք, խնդ-  
րեմ:

ՊՈՒՀՊՈՒՀԵԱՆ  
ի՞նչ դերասանուհին է, ի՞նչպէս պահում է ի-  
րան . . .

## ԵՂԻՍԱԲԵԹ

Ինձ փոքր ինչ զարմացնում է ձեր լոռութիւնը,  
այ. Պուճպուճեան, նաև ձեր այցելութիւնը անդամ:  
ՊՈՒՀՊՈՒՀԵԱՆ

Զարմացնո՞ւմ է: (Առանձին.) Վերջապէս:

## ԵՂԻՍԱԲԵԹ

Զարմանում եմ, որովհետեւ ձեր արտասահման  
գնալուց յետոյ . . .

## ՊՈՒՀՊՈՒՀԵԱՆ

Շուտով դուք մարդու գնացիք, փոխեցիք ձեր  
անունը . . . մոռացաք . . .

## ԵՂԻՍԱԲԵԹ

Եւ ի՞նչպէս գտաք մեր տունը,  
ՊՈՒՀՊՈՒՀԵԱՆ

Շատ հեշտ, որովհետեւ ես երէկ ձեր մօր մօտ  
էի:

## ԵՂԻՍԱԲԵԹ

Զարմանում եմ. ի՞նչի՞նա ի՞նձ չասաւ այդ,  
ՊՈՒՀՊՈՒՀԵԱՆ

Ես ի՞նդրեցի որ չասէ:  
ԵՂԻՍԱԲԵԹ

Դո՞ւք, և ի՞նչո՞ւ համար:  
ՊՈՒՀՊՈՒՀԵԱՆ

Նրա համար որ կամեցայ մտնել յանկարծ, զար-  
մացնել, շփոթել ձեզ:

## ԵՂԻՍԱԲԵԹ

Ի դուք . . . եթէ իմանայի ձեր գալը՝ ես մար-

դուս տանը կը պահէի . . . թէն դուք տեսել եք  
նորան, բայց ես կը վերանորոգէի ձեր ծանօթու-  
թիւնը, կը մօտեցնէի ձեզ նրա հետ:

## ՊՈՒՀՊՈՒՀԵԱՆ

Ի՞նչպէս: (Ծիծաղ) Դուք կը կամենայիք մեղ մօ-  
տեցնել միմեանց հետ. դուք կը կամենայիք ի՞նձ  
ներկայացնել նրան:

## ԵՂԻՍԱԲԵԹ

Պարզ բան է . . . ես յօյս ունիմ որ դուք կ'այ-  
ցելէք մեղ շուտ շուտ, իբրև մեր հին ծանօթ:

## ՊՈՒՀՊՈՒՀԵԱՆ

Ես այցելեմ ձեզ, շուտ շուտ . . . դուք այդ  
ցանկանում էք . . .

## ԵՂԻՍԱԲԵԹ

Խնդրում եմ և յուսով եմ . . .

ՊՈՒՀՊՈՒՀԵԱՆ, առանձին,  
Օ՛, դերասանուհի, (Նորան.) Շատ ուրախ եմ. մի-  
այն չգիտեմ . . . մտածեցէ՛ք . . . դուք հետե-  
ւանքից չէ՛ք վախենում . . .

## ԵՂԻՍԱԲԵԹ

Հետեւանքի՞ց . . . ես ձեզ չեմ հասկանում:  
ՊՈՒՀՊՈՒՀԵԱՆ

Ես մարդ եմ . . . ես երաշխաւոր չեմ կարող  
լինիլ . . . որովհետեւ իմ մէջ կայ այնքան դրամա-  
տիզմ . . . այնքան հոգի . . . ոյժ, énergie . . .  
Ես վախենում եմ մեր յարաբերութիւնների մասին:

## ԵՂԻՍԱԲԵԹ

Մեր յարաբերութիւնների . . . դուք ի՞նձ զար-  
մացնում էք:

զա յանու զար ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ ով ցման սար  
Տանջուել հանապազ, ամէն մէկ բուք, ուրիշ-  
ների և նրա առաջ . . . Այդ սարսափելի բան  
է. Ես ձեզ խղճում եմ, ճշմարիտ: Մի՞թէ դուք կը  
տանիք այդ ընտանեկան գաղտնի դրաման . . .  
ԵՂԻՍՍԲԵԹ.

Զեր խօսքերը հանելուկներ են ինձ համար . . .  
Դուք ինձ վախեցնում էք, ճշմարիտ, բաց ասէք  
ձեր միտքը, ի սէր Աստուծոյ:

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Ուրեմն ես պիտի ճշմարիտն ասեմ: — Ճակատա-  
գիրը լզուր մօտեցրեց ձեզ ինձալիսի մարդու հետ . . .  
Կարո՞ղ էք արդեօք պատերազմել. ախ ցաւում եմ,  
ցաւում եմ ես ձեզ համար:

ԵՂԻՍՍԲԵԹ.

Ի՞նչ է պատահել ձեզ, ասացէք ինդրեմ, (Ա-  
ռանձնի.) Չլինի թէ ցնորուել է:

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Լսեցէք ուրեմն, Ձեզ յայտնի է արդէն թէ դուք  
ինչ էք ինձ համար, բայց դուք ինձ լսե չեք  
ճանաչում: Հիմա ես կը խոստովանիմ ձեզ ամէնը:  
Իմ ամբողջ կեանքս եղել է և կը լինի ամենազ-  
րաւոր, ամենաարտասուելի և սիրտ պատառոտող  
դրամա:

ԵՂԻՍՍԲԵԹ

Խնչըն են հարկաւոր այդ բաները. ուրիշ ա-  
ռարկայի վրայ խօսենք, խնդրեմ:

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Ո՛չ, այսօր կամ երբէք . . . Մէկ ժամանակ ես

Ճանօթացայ մէկ գեղեցիկ ընտանիքի հետ. Նորա-  
նում ես յոյս ունէի զտնելիս երջանկութիւնս, որը  
պարունակվում էր մէկ գեղեցիկ հրեղեն աղջկայ  
մէջ, որին ես սիրեցի նրա պարզ հոգու համար . . .  
Ժամանակը և մայրն այդ աղջկան մօտեցրին մեզ  
Այդ օրիորդը սիրում էր ինձ:

ԵՂԻՍՍԲԵԹ, Կլիմ ընկնելով և զարմանալով  
լողակիցնում է նորան:

Ի՞նչպէս:

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Այսինքն այդ բանը օրիորդը չեր խօսուովանել  
ինձ, բայց նորա աշքերը և մէկ քանի տոմսակ-  
ները համոզեցին ինձ որ ես կարող եմ յուսալ:  
Յանկարծ ես հիւանդանում եմ: Ոսկրացաւը քիչ  
է մնում ինձ գերեզման տանէ, բայց բժիշները  
ինձ տաք ջուր են ուղարկում: Ես ճանապահ եմ  
ընկնում այդ հիւանդի օրիորդի պատկերը սրտումս,  
և նրա տոմսակները գրպանումս: Երկինքը և ջուրը  
վերանորոգում են իմ առողջութիւնս: Ես դառ-  
նում եմ իմ հայրենիքս և ի՞նչ եմ տեսնում: Խո-  
րամանկ օրիորդը մարդու է գնացել լինալ:

ԵՂԻՍՍԲԵԹ:

Ես չեմ հասկանում թէ ի՞նչի էք այդքան եր-  
կար ու բարակ պատմում ինձ այդ բանը, բայց այ-  
նու ամենայնիւ ցաւում եմ ձեր վիճակի վրայ:

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ, Վեր կենար ՀԱՐՄՈՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Դուք ցաւում էք, իսկ հիմա շատ ուշ է ու էիք  
Պիտի ցաւէիք առաջ, Այդ օրիորդը կուք էիք:

Եղիսաբեթ, կղզելով.  
Ե՞ս, մի՞թէ:  
ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Դուք, որ քամբախտացրիք իմ գոյութիւնս, ըսպանեցիք իմ երիտասարդութիւնս, ամրող իմ կեանքս, ասում եմ Այստեղ այս կոտրուած սըրտիս, ձախ գրպանումը ողջ են ձեր նամակները: Նոքա իմ զէնքն են և ի՞նչ զէնք, հասկանո՞ւմէք... Դուք գիտէ՞ք որ այդ թալիսմանի զօրութիւնը կը հպատակեցնէ մարդուն ամուսնացած կնոջը: Նա այնուհետև դառնում է այդ մարդու աղախինը, խաղալիկը, որ նա կարող է շրջել որ կողմն ուղենայ:

Եղիսաբեթ

Խելագարուել էք ինչ է, այդ նամակները ես գրել եմ մօրս կամքով:

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Առաւել վատ, որովհետև նա ես պիտի մասնակից լինի այդ գրամյին:

Եղիսաբեթ

Այդ նամակների մէջ ոչինչ այնպէս բան չկայ...

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Փոյթ չէ, այդ նամակները ինձ մօտ են: Ես չեմ ցոյց տա, կ'ակնարկեմ ձեր ամուսնուն:

Եղիսաբեթ

Ես նա կը ծիծաղի այդ նամակների գրայ:

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Նա ձեզ սիրում է և նախանձոտ բնութիւն ու-

նի, իսկ այդպիսի բնաւորութեան հետեանքն է մենամարտութիւն, duel.

Եղիսաբեթ

ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ:

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Արիւնահեղ մենամարտութիւնն եւ ես կըսպանեմ նրան անպատճառ: Նա երբէք ատրճանակ չէ վերցրած ձեռքք, իսկ ես սովորել եմ, երկար ժամանակ ուղիղ արձակել ատրճանակից:

Եղիսաբեթ

Միթէ դուք ընդունա՞կ էք այդպիսի բանի:

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Ես այդպէս եմ ցանկանում, ի՞նչ է կեանքը, աշխարհս, մարդիկ. ի՞նչ է, հարցնում եմ ձեզ, ոչնչութիւնը: Այսուհետեւ ես ձեզ հազարումէկ կրքերի ամասնակից կ'անեմ: Ես կը հարկադրեմ ձեզ արտասուլների հեղեղներ թափել, ես կը ծանօթացնեմ ձեզ յուսահատութեան հետ: Ես կը ցանեմ այստեղ կոհւ, վախ, յուսահատութիւն, գուցէ և մահ:

Եղիսաբեթ

Դուք ինձ սարսափեցնում էք:

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

Ես ձեզ ասացի արդէն որ իմ կեանքս դրամաէ, վերջապէս ես կը զուարձանամ այս ընտանեկան աղմուկներով . . . վերջապէս ես կը դառնամ շարժող այս սարսափելի տեսարանների: Եւ ահա ինչու եմ ցաւում ես ձեզ վրայ:

Եղիսաբեթ

Բայց ի՞նչ էք կամենում ինձանից . . .

ՊՈՒՇՊՈՒՇԵԱՆ  
Ամենաշատ բան և ոյինչ . . . ես կամենում եմ  
տեսնել դրամա, սաստիկ զգալ, ես սիրում եմ ձեզ  
Եղիսաբեթ.

Պարոն Պուճպուժեան:

ՊՈՒՇՊՈՒՇԵԱՆ  
Ես դուք պիտի սիրէք ինձ, եթէ ո՛չ, մէկ ակ-  
նարկութիւն միայն և հետևանքն է մենամարտու-  
թիւն, մահ և կորուստ:

Եղիսաբեթ

Միթէ ձշմարիտ է առ առ առ առ առ

ՊՈՒՇՊՈՒՇԵԱՆ

Վկայ է Աստուած . . . մահ,

Եղիսաբեթ

Դուք սարսափելի մարդ էք եղել,  
ՊՈՒՇՊՈՒՇԵԱՆ  
Ե՞ս, օ՛ ի՞նչ էք ասում .

Եղիսաբեթ, նասելով հազիւ պահում է ծիծաղը.  
Ես ինձ վատ եմ զգում:

ՊՈՒՇՊՈՒՇԵԱՆ

Վա՞տ էք զգում . . . ջուր չէ՞ք կամենում  
Եղիսաբեթ

Ո՛յինչ, կանցկենայ,  
ՊՈՒՇՊՈՒՇԵԱՆ  
Ես հասկանում եմ ձեր դրութիւնը, ձեզ հանգս-  
տութիւն է հարկաւոր: Ցածեսութիւն, Շուտով կը  
վերադառնամ. մէկ ժամից դարձեալ ես այստեղ  
եմ, ինձ հարկաւոր է ձեզ տեսնել կրկին, Միայն

Խնդրում եմ զգոյշ վարուեցէք, ձեր մարդու ներկա-  
յութեանը, եթէ ոչ, զիտէք թէ ինչ հետեանքներ  
կարող են առաջանալ:

Եղիսաբեթ.

Ա՛ն, դուք այնքան բան ասացիք, այնպէս շփո-  
թեցիք ինձ, որ խօսք չեմ գտնում պատասխանե-  
լու:

ՊՈՒՇՊՈՒՇԵԱՆ

Ինչի՞ն են հարկաւոր խօսքերը, երբ մինք առանց  
խօսելու հասկանում ենք միմեանց, մեր աչքերը  
կարող են խօսել մեր տեղ: Մնաք բարեաւ . . .  
Ես հասկանում եմ ինչքան զժուար է ձեզ ասել  
ցտեսութիւն . . . բայց ի՞նչ անես . . . ճակա-  
տագիրը . . . Մնաք բարեաւ (Առանձին.) Ողորմե-  
լի կին, ինչ դրամատիկական դրութեան հասցրի:  
(Պուդս է գնում):

Առաջ այց հանում ու այսուց  
հանու այց հան

ՏԵՍԻԼ ԾՐԴ

Եղիսաբեթ, միայն

Ցիմար . . . (Միջադում է.) Հազիւ կարողացայ  
պահել ծիծաղս . . . Բայց թէն այն տոմսակների  
մէջ ոչինչ չկայ, թէն մեղաւորը մայրս է, բայց  
Գէորգը . . . օ՛հ, երեխ ինձ նման կը ծիծաղի միայն  
և մենք միասին կը ծաղրենք այս դրամատիկա-  
կան հերոսին (Զանգի ձայն): Նա է, լաւ ժամանակ  
է . . . սկսենք:

ՏԵՍԻԼ 6ըդ  
ԳԵՈՐԳ, ԵՂԻՍԱԲԵԹ  
ԳԵՈՐԳ, մանելով.

ՀԵռացի՛ր պատուհանից, կը մրսեսէ ու  
ԵՂԻՍԱԲԵԹ, պատուհանի մօտ մոածելով.  
Ա՞լս . . .  
ԳԵՈՐԳ

Ասում ես, Եղիսաբեթ, հեռացի՛ր պատուհանից,  
քամի է . . .  
ԵՂԻՍԱԲԵԹ, միհնոյն գըութեան մէջ բազար  
Ա՞լս . . .  
ԳԵՈՐԳ  
Այդ ի՞նչ է նշանակում. կատակ ես ներկայացնում, թէ կապրիզացել ես: Լաւ, լաւ, արա! ինչ  
կամիս, ես տեսայ մօրդ և եղբօրդ . . . իսկ դու  
ինձ չես լսում:

ԵՂԻՍԱԲԵԹ

Ա՞լս!

Կիդ բաւական է յիմարանաս . . . ի՞նչ հառա-  
չանքներ են, ինչ դարդ ունիս:

ԵՂԻՍԱԲԵԹ, մօտենում է մարդուն գըամա-  
տիկական ձեռվ.

Ժօրժ:

Ի՞նչ է պատահել, դու դողում ես ու չես նա-  
յում ինձ վրայ . . .  
ԳԵՈՐԳ.

ԵՂԻՍԱԲԵԹ, անշանգիստ և կիսակտուր ձայնով.  
Զեմ համարձակվում,  
ԳԵՈՐԳ.

Ի՞նչ է պատահել,  
ԵՂԻՍԱԲԵԹ, չպիլլով նորա առաջ.  
Ժօրժ . . . ողորմիր, ողորմիր ինձ, ահա ես  
ծունկ ընկած քո առաջդ ինդրում եմ, ողորմի՛ր:  
ԳԵՈՐԳ, ուղում է ոսի կանգնացնել.  
Եղիսաբեթ, գժուել ես ինչ է,  
ԵՂԻՍԱԲԵԹ  
Թո՛ղ մնամ այսպէս, թո՛ղ. ես արժանի եմ իր-  
բն յանցաւոր կին:

ԳԵՈՐԳ:  
Ի՞նչ է պատահել . . . Երեխ մէկ բան ես խա-  
րաբ արել իմ առանձնասենեակում. հա՛ երեխ մի  
հարկաւոր թուղթ ես ձղել . . . լաւ է, ինդրեմ,  
վեր կաց:

ԵՂԻՍԱԲԵԹ, վեր կենալով.  
Դու ինձ չես ճանաչում, ողորմելի, չես իմանում  
թէ ինչպիսի արարածի հետ ես կապուած . . .  
խղճում եմ, խղճում եմ քեզ:

ԳԵՈՐԳ:  
Տէր իմ Աստուած . . . չուզարկեմ արդեօք բը-  
ժիշկի ետեից.

ԵՂԻՍԱԲԵԹ  
Լսի՛ր, այն ժամանակ երբ դու գնում գալիս  
էիր մեր տուն, որտեղ պատահեցար մէկ օրիսրդի,  
որին կամենում էիր մէկ օր քո ամուսին անուա-  
նել, այդ միջոցին գնալ դալ ունէր այդ տանը մէկ

ուրիշը, մէկ հարուստ երիտասարդ, որին օրիորդի  
մայրը ցանկանում էր իրան փեսայ անուանել . . .

ԳէՈՐԳ

Զէ. Կողարկեմ բժշկի ետեիցւ  
ԵՂԻՍԱԲԵԹ

Դու առաջարկութիւն արիր այդ օրիորդին այն  
ժամանակ, երբ քո հակառակորդը յանկարծ հիւան-  
դանում է, քիչ է մնում որ մօտենայ գերեզմանին,  
բժիշկները ուղարկում են նորան տաք ջրեր՝ ար-  
տասահման, Օրիորդը ընդունում է ուրախութիւ-  
նով քո առաջարկութիւնդ և դառնում է քո ամու-  
սին: Ի՞նչ դրամա: Բայց որւ, խղճուկ, չգիտէիր որ  
քո սիրածդ հարսանիքից առաջ դրազրութիւն է ու-  
նեցել քո հակառակորդի հետ:

ԳէՈՐԳ

Սկսում է իրան մոռանալ, ի՞նչ քամբազգու-  
թիւն: ԷՇ, կարապետ:

ԵՂԻՍԱԲԵԹ

Ի՞նչ դրամա: Հիմա այդ հակառակորդը այստեղ  
է և զինուորուած այդ նամակներով կը տանէ քո  
կնոջդ դէպի կորուսը, Դորա հետեանքն է մնան-  
մարտութիւն, մահ և կորուսու:

ԳէՈՐԳ

Տաքութիւնը սաստկանում է: ԷՇ, կարապետ,  
ուր ես

ԵՂԻՍԱԲԵԹ

Եւ ես յանցաւորս պիտի քո մահուանդ և կորս-  
տեանդ պատճառը դառնամ. . . ԱՇ. Ի՞նչ սար-  
սափելի դրութիւն, ես այդ չեմ կարող տանել, ես

կը մեռնիմ քո սաի տակը, ինդրելով որ դու իբզ-  
ճաս ու ներես ինձ, (Չորսամ' է դարձեալ.) Ժօրժ,  
խղճա՛, խղճա՛ ինձ,

ԳէՈՐԳ, սաստի.

Լիդ, ասա՛ վերջապէս, այդ ի՞նչ է նշանակում:  
ԵՂԻՍԱԲԵԹ, չոքած դառնալով դէպի եւր  
ընական խօսակցութիւնը.

Այս է դրամա, իմ ընկեր, ամենաարտասուալից,  
սիրտ պատուող: սարսափելի դրամա.

ԳէՈՐԳ

Դարձեա՛, բայց ի՞նչ է նշանակում այդ քո ա-  
սած դրաման:

ԵՂԻՍԱԲԵԹ

Այս, ինչ որ հիմա ես ներկայացրի քո առաջդ  
մինոյն արաւ ինձ հետ քո բացակայութեանդ  
Պուճպուճեանը:

ԳէՈՐԳ

Ի՞նչպէս, ուրեմն այդ ցնորդքը այս:

ԵՂԻՍԱԲԵԹ

Նշանաշնչութիւն եմ ասում: Նա այստեղ էր և ասաց  
որ եթէ ես չեմ կատարի նրա կամքը, նա սարսա-  
փելի բաներ կ'անէ . . . մէկ խօսքով խօստացաւ  
ամբողջ դրամա:

ԳէՈՐԳ

Բայց նամակները . . . և ամ մի քայլ գուայ  
ԵՂԻՍԱԲԵԹ

Ամենաջին բան . . . երկու կամ երեք հատ  
կը մինին և այն էլ դրած են մօրս խօսքերից և ոչ  
իմ սեփական:

ԳԵՐՈԳ.

ի՞նչպէս!

ԵՂԻՍԱԲԵԹ

Ահա նոցա պարունակութիւնը. «պարոն, այսինչ  
օր մենք օպերայում կը լինինք օթեակի 14րդ հա-  
մարում, եկէք, եթէ կարող էք, մայրս ձեզ սպա-  
սում է» (Ծիծաղում է)

ԳԵՐՈԳ.

Եւ յիմարը կարծո՞ւմ է . . .

ԵՂԻՍԱԲԵԹ, Տիժաղելով.

Դորանից դրամ շինել,

ԳԵՐՈԳ, Տիժաղելով.

Դրամա . . . ա՞ն, ի՞նչ միտք . . . սպասիր,  
սիրելիս, ես քեզ կը մոռացնել տամ դրամաներ ներ-  
կայացնել, Ե՞րբ կը գայ, ԵՂԻՍԱԲԵԹ

Իսկոյն,

ԳԵՐՈԳ.

Սպասի՛ր, աղաւնիս, ես քեզ կը ցոյց տամ թէ  
ինչպէս է հարկաւոր դրամաներ ներկայացնել,—

Միայն դու պիտի օգնես ինձ,

ԵՂԻՍԱԲԵԹ.

Կ'աշխատեմ: (Նայելով պատուհանից.) Մէկ կառք  
մոտենում է մեր դրանը,

ԳԵՐՈԳ.

Կառք, չինի թէ նա է,

ԵՂԻՍԱԲԵԹ.

Իսկ և իսկ.

ԳԵՐՈԳ.

Լաւ, զանգը խփի՛ր խնդրեմ: (Զանգը խփում է)

ԵՂԻՍԱԲԵԹ

Ի՞նչ ես կամենում:

ԳԵՐՈԳ.

Ոչինչ, բան եմ ուզում պատուիրել՝

ԿԱՐԱՊԵՏ

Հինչոր աղա . . .

ԳԵՐՈԳ.

Կարապե՛տ, (Զանգը խփում էն)

ԿԱՐԱՊԵՏ

Հլէ սհաթիս: (Ուզում է գնալ:

ԳԵՐՈԳ.

Սպասի՛ր, այս սեղանի լրայ թէյ, շուտով:

ԿԱՐԱՊԵՏ

Հլէ սհաթիս: (Նորեց լավում է զանգի ձայն:

ԳԵՐՈԳ.

Գնա, բաց արա և խնդրիր որ չնորհ բերէ. ո՛վ  
ուզում է լինի: (Կարապետը զնում է)

ԵՂԻՍԱԲԵԹ

Որի՛ մէկ կատակ ներկայացնենք:

ԳԵՐՈԳ.

Անշուշտ, սկսինք: Հիմա ես և դու բեմ ենք  
դուրս եկել, վարժոյրը բարձրացաւ, տեսիլ 2րդ,  
միմնոյն անձինք և նա,

ՏԵՍԻԼ 7ը

ԱՌԱՋԻՆԵՐԸ և ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ

ՊՈՒՃՊՈՒՃԵԱՆ, մանելով.

Bien, շատ լաւ,

ԵՊԻՍԱԲԵԹ, ՆՈՐՈՒՅՆ և ՀՅՈՒՅ  
Ա է, պարոն Պուճպուճեան . . . բարե՛, (Պուճ  
պուճեանը մօսենում է և գլուխ է տալի՛) Պայ գլուխ  
Գլուխ.

Ի՞նչ յիմար դէմք է,  
ԵՊԻՍԱԲԵԹ, ցածը.

Ես կը ներկայացնեմ ձեզ իմ մարդուն  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Հըմ, (Ըւրախ.) Լաւ:  
ԵՊԻՍԱԲԵԹ, վեր կինալով.

Ժօրժ, այս պարոն Պուճպուճեանն է, որի հետ  
զու պիտի պատահած լինիս մեր տանը, մէկ տա-  
րի սորանից առաջ,  
Գլուխ, ձեռը տալով.

Ես շատ ուրախ եմ վերանորդելու ձեզ հետ մեր  
կին ծանօթութիւնը!  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Պատիւ եմ համարում: (Առանձին.) Ի՞նչ զրամա է:  
Գլուխ.

Ես այնքան լսել եմ ձեր մասին, որ առանց ծա-  
նօթ վնելու յարդում էի ձեզ:  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Ես ես իմ կողմից: (Առանձին.) Ի՞նչ զրամատի-  
կական դրութիւն է:  
Գլուխ.

Իմ կինս այնքան խօսել է ձեզ վերայ:  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ, տարացած,

Ձեր կի՞նը: (Զազելով երան.) Շատ բնական է:  
Հին ծանօթութիւնը, սովորութիւնը . . . կապը,

բարեկամութիւնը հըմ . . . հըմ . . . (Առանձին,)  
Ինչպէս տանջիւթիւնի խեղճը այս բոպէում  
Գլուխ.

Ի՞նչ էք կանգնել, նստեցէք, խնդրեմ, ես յուսով  
եմ որ յիշելով անցեալը դուք չէք մերժի ձեր բա-  
րեկամութեանը մասը և ինձ համար:

ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Շատ ուրախ եմ: (Առանձին.) Ողորմելի ամուսին,  
խեղճը ոչինչ չէ կասկածում:  
ԵՊԻՍԱԲԵԹ

Ժօրժ, ինչի՞ պարոն Պուճպուճեանին պապիրոս  
չես առաջարկում:

Այս ներկցէք . . . չէք կամենալ սիզար:  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Ըւրախութեամբ: (Գլուխ)  
ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Ընտիր, լաւ հավանի սիզար է . . . իսկոյն բե-  
րեմ . . . ես ինքս չեմ ծխում, բայց ունիմ բարե-  
կամներիս համար, իսկոյն: (Գնում է աջ:)

ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ, առանձին,

Բարեկամ, ի՞նչ զրամա է . . . Յարմար ժամա-  
նակ է. մենք մենակ ենք: (Եղիսաբեթին.) Այս բո-  
պէից ինչ ես թողի ձեզ, զուք առաւել զեղեցկա-  
ցել էք.

ԵՊԻՍԱԲԵԹ, կեղծելով.  
Կամաց նա կը լսէ:

ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ  
Թո՞ղ լսէ, լսէ նաև ամբողջ աշխարհը:

3

Եղիսաբեթ, ունի չէք խնայում, զատ ո քրցի  
Պնդութ, գուք ինձ չէք խնայում, զատ ո քրցի  
Պնդութ, ինձ չէք խնայում, զատ ո քրցի  
Ես միայն սիրում եմ ձեզ, մերժում զատ չէք  
Եղիսաբեթ, ունի չէք խնայում, զատ ո քրցի  
Կամաց, աղաջում եմ, և զան զմանիումը  
Պնդութ, պնդութ, աղաջում եմ, և զան զմանիումը  
Վաղը այստեղ եմ, աշխատեցէ՛ք . . . մենակ  
Մնելու, հեռացրէք ձեր մարդուն,  
Եղիսաբեթ, առանձին.  
Ախ'րբ (նորան) Ի՞նչ էք կամենում:  
Պնդութ, պնդութ, պնդութ  
Երեկոյեան ժամը վեցին ես այստեղ կը լինի:  
Եղիսաբեթ.  
Խղճացէ՛ք, խղճացէ՛ք:  
Պնդութ, պնդութ  
Եթէ ոչ, ես կը ցոյց տամ ձեր նամակները:  
Եղիսաբեթ, կողծեալ սարսափով.  
Աստուած իմ . . . կը սպասեմ:  
Պնդութ, պնդութ  
Մենակ:  
Եղիսաբեթ  
Մենակ, Պնդութ, պնդութ, առանձին,  
Oh, quel drame! (Բռնում է ձեռը և համբու-  
ռում է: Մտնում է Գէորգը) Եղիսաբեթ, կողծեալով նորանից.  
Մարդս, մարդս,  
Պնդութ, պնդութ, պնդութ  
Հըմ, հըմ, հըմ (Առանձին) C'est ce qu'on appelle

une histoire.

Գէորգ, առանձին.  
Բրավօ՛, ի՞նչ լաւ գերասանութիւն է անում:  
(Պուճուածեանին.) Ահա և սիդարը:  
Պնդութ, պնդութ, վառում է և զնում է բեկի  
առաջակողմը.

Շնորհակալ եմ, merci bien, monsieur.

Եղիսաբեթ, անցնելով մարդու կողքից,  
Ինչի՞ն թէյն ուշացնում . . . Հաւանում ես  
Գէորգ.

Անհման, Պնդութ, պնդութ, պնդութ  
Պնդութ, պնդութ, պնդութ

Ի՞նչպէս յիմարացնում է մարդուն (կոցնելով  
սիդարը.) Ոէտք է ասած որ լաւ սիդար է: (Կարապե-  
տը մանում է չայի իլեղէններով, այսինքն երկու չայնիեւ,  
երկու բաժակ, մէկ թառ)

Եղիսաբեթ  
Ահա և թէյը . . . Այստեղ զի՞ր, լաւ, զնա՛: (Սո-  
տենում է չայի սկզբնին)

Կոբագիս, զնալով.  
Հլէ սհաթիս: (Պնդում է:)

Ախ, թող ես ածեմ թէյը:  
Եղիսաբեթ, կողծեալով նորանից

Արդ ի՞նչ ցանկութիւն է:  
Գէորգ.

Այսպէս կամենում եմ:  
Եղիսաբեթ

Լաւ, եթէ կարող ես:

ԳԵՂԻՐԳ.

Կը տեսնես:

ԵՂԻՍԱԲԵԹ.

Կը տեսնեք:

ՊՈՒՃՊՈՒՃԵԼՆ.

Այ դերասանուհի. թող մեր թատրոնասէրները  
սորան բեմ դուրս բերէին . . .

ԳԵՂԻՐԳ. Թէյ ածելով.

Ասացէք խնդրեմ, պարոն Պուճպուճեան, ինչպէս  
ժամանակ անցկացրիք արտասահմանում . . .

ՊՈՒՃՊՈՒՃԵԼՆ, ծանը քայլով մօտենալով դիւանին.

Միշտ և ամեն տեղ տիսուր, տիսուր անգամ ի-  
տալիայի միշտ իստակ երկնքի տակ, սիրտս միշտ  
սառը, և հոգիս մութ ինչպէս գերեզման:

ԳԵՂԻՐԳ.

Ինչո՞ւ, ասացէք խնդրեմ,

ՊՈՒՃՊՈՒՃԵԼՆ, մօտենում է այնքան որ կանգ-  
նում է գէորգի բազկաթութ ետելց.

Այսո՛, իմ ամբողջ կեանքս, պէտք է ասել, անընդ-  
հատ դրամատիկական շղթայ է:

ԵՂԻՍԱԲԵԹ. Նրա ականջում.

Լոեցէք, խնդրեմ. կարող է զվահ ընկնել և ես  
կորած եմ:

ՊՈՒՃՊՈՒՃԵԼՆ, ցածը նմանապէս.

Միամիտ եղէք: (Դէորդին.) Եղբ և իցէ ես կը  
պատմեմ ձեղ իմ անցեալը:

ԳԵՂԻՐԳ.

Շատ շնորհակալ կը լինիմ, որովհետեւ ես ինքս  
սիրում եմ դրամատիկական բաներ. ես զգում եմ որ  
ինքս ընդունակ եմ մէկ որ և իցէ դրամայի հերոս. Մի-  
նելու: Ո՞րքան բաւականութիւն է տալի, զորօրինակ,  
զգալ ատելութիւն դէպի մէկը, վրէժ առնել մէկից

մէկ չնչին բանի համար, սիրոյ նախանձից: Մէկ  
հայեացքի համար միայն տեղնուտեղը սպանել հա-  
կառակորդին. ի՞նչ դրամա է, ի՞նչքան բաւակա-  
նութիւն:

ՊՈՒՃՊՈՒՃԵԼՆ, հեռանալով առանձին.

Je commence à craindre, ça va բան է:

ԵՂԻՍԱԲԵԹ, ցածը.

Բրազօ, ԳԵՂԻՐԳ, հիանալի է:

ԳԵՂԻՐԳ

Ես ես կը պատմեմ ձեզ մի ժամանակ, թէ ինչպիսի  
դրամատիկական դրութեան մէջ եմ գտնուել ես  
իմ կեանքիս մէջ:

ՊՈՒՃՊՈՒՃԵԼՆ

Շատ ուրախ եմ, շատ ուրախ. (Առանձին.) Շատ  
կարելի է որ այսպէսով մենք կը հասնենք, ողբեր-  
գական դրութեան:

ԳԵՂԻՐԳ

Ահա և թէյը պատրաստ է մաս. ԱՌ քո թասը:  
ԵՂԻՍԱԲԵԹ, վեցնելով.

Շնորհակալ եմ:

ԳԵՂԻՐԳ, տալով ըաժակը.

Կը հրամայէք, պարոն Պուճպուճեան:  
ՊՈՒՃՊՈՒՃԵԼՆ, վեցնելով.

Շնորհակալ եմ:

ԵՂԻՍԱԲԵԹ

Լիմոն կամ սեր չէք կամենալ:

ԳԵՂԻՐԳ

Կամ քաղցրաւենի:

ՊՈՒՃՊՈՒՃԵԼՆ, աշակելով.

Ոչ մէկը, ոչ միւսը և ոչ երրորդը: Աւելորդ բա-

Ները փչացնում են թէյի ճաշակը, մանաւանդ այս-  
պիսի թէյի զրաւագրն ըստ բանակ զգացնած  
արաւագ մազքով, գլուխութիւն ունեցած մարդուն առաջ

Զեր ասածր ես քաղաքավարական խօսքի տեղ  
կ'ընդունէի, եթէ իմ կինո լինէր թէյ ածողը, բայց  
ձշմարիտ որ լաւ թէյ է: (Խմում է:)

ՊՈՒՇՊՈՒԺԵԱՆ

Երեսում է իսկոյն, որ դուք սիրում էք թէյը, որ ինք-  
ներդ էք պատրաստում:

ԵՂԻՍՍԲԵԹ սկսութիւն այ-  
ս մընդհակառակը այս տուային անդամն է որ դա  
է պատրաստում:

ԳԼՈՒԽ

Այդ նորանից է որ ես կամենում եմ պատուել  
մեր թանգագին հիւրին:

ՊՈՒՇՊՈՒԺԵԱՆ

Օ merci bien, monsieur! Ներեցէք խնդրեմ: (Ա-  
զիստեմը յետ է տալի թագուհուն:)

ԳԼՈՒԽ

Կը կամենա՞մ էլի: Տարբանդոց  
ԵՂԻՍՍԲԵԹ, հեռանալով.

Ե՞րբ եմ մէկից աւելի խմնի: Այս անաղը պ  
ՊՈՒՇՊՈՒԺԵԱՆ, աւարտելով.

Այնքան լաւ թէյ է, որ ես անամօթաբար համար-  
ձակում եմ խնդրել երկրորդ բաժակ:

ԳԼՈՒԽ, վերցնելով բաժակը

Ուրախութեամբ: (Վ. Եթ է կենում.) Ծոպէները թանգ  
են: (Մասենալով կնոջը, ցածը.) Հիմա ես եմ բեմ դուրս  
գալի: (Կանգնում է բեմի մէջունը տրապեկական ձևով:) Աղօթք արէք:

Comment!

ԳԼՈՒԽ

Աղօթք արէք:

ՊՈՒՇՊՈՒԺԵԱՆ

Ինչպէս թէ աղօթք անեմ:

ԳԼՈՒԽ

Ինչպէս որ աղօթք են անում մահից առաջ:

ՊՈՒՇՊՈՒԺԵԱՆ

Այդ ի՞նչ է նշանակում: Ասուցիլ ովով ով ան-  
առաւտուա ծանի ԳԼՈՒԽ

Այն որ եմ բոլորը գիտեմ . . . Ա՝ պարոն, դուք  
իբրև նոր Դօն Փուան ներս էք պրծնում խաղաղ

ընտանիքի մէջ և ցանում էք արտասուք, կաիւ և  
յուսահատութիւն, Դուք այստեղ դրամաներ էք  
ներկայացնում, պատուաւոր կնոջ անունը խաղա-  
լիկ էք շինում: Դուք խոստանում էք մենամար-  
տել նրա ամուսնու հետ Զեղ համար կեանքը զին  
չունի, մեռէք ուրեմն:

ՊՈՒՇՊՈՒԺԵԱՆ

Ի՞նչ էք կամենում ասել:

ԳԼՈՒԽ

Այն որ ընկի'ր և մեռի'ր:

ՊՈՒՇՊՈՒԺԵԱՆ

Հասկանում եմ . . . ժա՞մը, տե՞ղը, ի՞նչ զէն-  
քով: (Առանձին.) Ծախսել է ինձ:

ԵՂԻՍՍԲԵԹ, ընկնելով երկուսի մէջ.

Մենամարտութիւն, խղճացէք, խղճացէք . . .

ԳԼՈՒԽ

Հանգստացի'ր, զա միմիայն կը մեռնի:

ՊՈՒՏՎՈՒՃԵԱՆ  
ԻՆՉԱՔՍ թէ միայն,

ԳԵՈՐԳ.

Առանց գուրս գնալու այստեղից:

ՊՈՒՏՎՈՒՃԵԱՆ

Այդ կը լինի բռնադատութիւն:

ԳԵՈՐԳ.

Դուք կը մեռնիք առանց բռնադատութեան,  
հանդարտ, գեղեցիկ մահով, և ի՞նչ հիանալի դրա-  
մա կը լինի, Երիտասարդ հասակով, նիհար դէմ-  
քով, բայց և լի կեանքով ման եկած արտասահ-  
մանի բռլոր հիւրանոցները, բայց դարձած իւր հայ-  
քենիքը յիմար տեսքով, յանկարծ ուրիշ տանը,  
իւր սիրած կոսջներկայութեամբ, զարձնելով նո-  
րան նրանամակները, մեռնում է անսպասելի մա-  
հով:

ՊՈՒՏՎՈՒՃԵԱՆ, յետ ընկնելով.

Ի՞նչաքս:

ԳԵՈՐԳ.

Մի՛ վախենաք, ես ձեղ չեմ ծեծի, թէև լաւապ-  
տակների էք արժանի, դուք կը մեռնիք իսկոյն:

ՊՈՒՏՎՈՒՃԵԱՆ

Ես . . . օգնեցէք, օ մօn Dieu!

ԳԵՈՐԳ.

Ե զուր էք աղաղակում, ես վերջ տուի ձեր զը-  
րամային, այս բաժակի միջոցով:

ՊՈՒՏՎՈՒՃԵԱՆ

Ես վախենում եմ հասկանալ:

ԳԵՈՐԳ.

Թո՞յն . . .

ՊՈՒՏՎՈՒՃԵԱՆ, սասակի վախեցած.

Թո՞յն . . . թո՞յն . . . բժիշկ, ի սէր Աստուծոյ,  
բժիշկ կանչեցէք . . . ի՞նչաքս, դուք ինձ թունաւո-  
րեցի՞ք, ո՛հ, ես մեռնում եմ . . . բռնեցէք ինձ . . .  
բժիշկ, բժիշկ: —Այս, այս, ես զգում եմ թոյնի զօ-  
րութիւնը . . . ի՞նչ անեմ հիմա . . . օգնեցէք,  
ազատեցէք: (Անիսում է գիւղնի վրայ.) Ո՛հ, ես մեռ-  
նում եմ:

ԳԵՈՐԳ.

Կը կամենաք ապրել:

ՊՈՒՏՎՈՒՃԵԱՆ

Կամենում եմ, կամենում եմ, սաստիկ կամենում:  
ԳԵՈՐԳ.

Նամակները . . .

ՊՈՒՏՎՈՒՃԵԱՆ

Ահա՛, ահա՛, (Անուում է զբանում:) Ո՞ւր են,  
չկայ . . . բժիշկ . . . վայ . . . ահա՛, կարծեմ  
այս է:

ԳԵՈՐԳ.

Այդ է . . . ՊՈՒՏՎՈՒՃԵԱՆ

Խղճացէք, ղեղթափ ճարեցէք . . . վայ (Կա-  
յլով չայե երեխներին) Եամիտ, ազատ եմ այժմ: (Ո-  
ծում է կաթը բաժակում խառնում է ջրի հետ և խո-  
մում է:)

ԳԵՈՐԳ, ծիծալելով.

Դրամա խաղալը կը մռածայ այսուհետեւ:  
ԵԱ, ԻՍԱԲԵՅԹ

Խեղճ ողորմնիի: (Ծիծալում են երկար ժամանակ)

ՊՈՒՏՎՈՒՃԵԱՆ, երան գալով.

Ինչի՞ վրայ էք ծիծալում, ի՞նչ ծիծալի բան

կայ . . . դուք չեք խողնում.

Գէ՛լով, աւելի սաստիկ ծիծաղելով . . .

Նրա վրայ ենք ծիծաղում որ այս ամենը կատակ էր և ոչինչ թոյն չկար.

ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Ի՞նչպէս . . . մի՞թէ . . . ուրեմն ես կ'ապրեմ և չեմ մեռնի:

Գէ՛լով.

Ո՛չ, ո՛չ դուք գեռ երկար ժամանակ խստած կը ման գաք ձեր մօրուքը, ինձ միայն այս նամակներն էին հարկաւոր:

ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Հա՛ . . . (Առանձին.) Ի՞նչ յիմար դրութիւն (Բարձ ծիծաղելով.) Ի՞նչպէս ջուտով հասկացաք ինձ, ես ինքս էլ հանաք էի անում, ճշմարիտ, հանաք էի անում . . .

Գէ՛լով.

Ճշմարիտ:

ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Ճշմարիտ, այդ իմ սկսած հանաքն էր և դուք շարունակեցիք:

Գէ՛լով, առանձին,

Ոզորմելի:

ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Միայն ոչ ոքին չսսէք ինդրեմ:

Գէ՛լով.

Չեմ ասի, և ես ուրախ եմ որ այդ յիմարութիւններիցը դուրս եկաւ կատակ . . .

ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Որի անունը կը լինի . . .

Գէ՛լով.

ԱՆԱՆՈՒՆ ԿԱՏԱԿ:

ՊՈԽՃՊՈԽՃԵԱՆ

Տիկին, իմ վարմունքս խնդրեմ

Համարեցէք մի կատակ բան.

ԵՎԼՈՅԱԲԵԹ

Պարոն, ձեր կարծիքին ես եմ

Բոլորովին միշտ համաձայն,

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Երեքս էլ թող մէկտեղ ուխտենք )

Իրար բարեկամներ լինենք! ) կը ինչէ:

Պատիւ և սէր մենք չը խնայենք! )

ԵՎԼՈՅԱԲԵԹ

Իսկ ձեղանից, ո՞վ պարոններ,

Լինք ներողութիւն կը խնդրենք.

ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Թէ որ մի մեծ պակասութիւն

Նշմարեցիք այս մեր խաղում:

ՎԻՃԱԿ

## ԹԱՏՐՈՂԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

«Փորձ» ամսագրի վերջին հոկտեմբ թի համարում տպուած է «Հայկական թատրոնի անցեալը» վերնագրով մէկ յօդուած, նուէր կարնոյ Հայոց թատերական ընկերութեան, կարդացած դասախոսութիւն կարնոյ մէջ 15 յունիսի 1879 թ.

Այդ յօդուածը մենք կարդացինք մեծ ուրախութիւնով և կը ցանկանայինք որ այդպիսի ընտիր յօդուածներ՝ վերաբերեալ հայ թատրոնի զործունէութեան, շուտ շուտ երեային մեր մամուլի մէջ,

Նախ քան թէ յայտնենք մենք մեր կարծիքը վերաբերեալ այդ յօդուածին, հարկաւոր ենք համարում առաջ բերել կարճառօտ ձեռլ նորա պարունակութիւնը\*.

Հին ժամանակները դեռ ես, ասում է յօդուածագիրը. Հայերը ունեին ինքնուրոյն վիպակիան առածներ, որոնցից մէկի մասին վկայում է Պլուտարքը իր կրասոս վարքագրութեան մէջ, յետոյ փայտակուիր, մուշտէկուիր, քարաձգութեան, պարբռնելու և ասողիկութեան, նաև վիպասանութեան ձեռլ պահպանել են իւրեանց մէջ հրապարակական խաղերի նշանակութիւնը. որոնց նշանները

\* Յանեկացողներն ընդարձակուէն աեղեկանեալ այդ գեղեցիկ յօդուածի հետ, առաջարկում ենք կարդալ մանրամասն ուրձած ամսագրի մէջ հոկտեմբերի՝ ներկայ տարւոյ համարում:

մինչև այսօր նրեում են թիֆլիզում, Շամախում, Լոռում, Երևանու գիւղերում, Մուշ, Վան, որտեղ գեռես պահպանվում են ազգայնութեան կեանքն ու տարերքն:

Նմանապէս, ինչպէս վկայում է Տրդատ Բագրատունին, նախնի հայոց մէջ եղել են երգիչներ և երգուհիք, որոնք երգաբանում են եղել «Քաջազն ազատանոյն տարին ու տարիանքը, զօրն ու զօրութիւնը, գեղն ու գեղութիւնը» ևայլն:

Ցեսոյ Գրիստոնէութիւնը ինչպէս և Հառվմէական աշխարհի մէջ կուպաշտութիւնից մնացած այդ տեսակ աւանդութիւնները փոխարինեց համեմատ իւր ուղղութեան, ինչպէս Տարոն գաւառի ասողիկները տեղի տուին Գրիստոնէական հոգևոր երգիչների, հրապարակական հոսպիտութիւնը խափանուեց իրեն մեղք, կենդանի վիպասանութեան տեղ բռնեց սրբոց զրոյցները ևայլն ևայլն.

Այդպէս հետեւելով մի առ մի պատմական երեւոյթներին, պատուելի հեղինակը, հասնում է մինչև «լա Լօգանտիէրս» այսինքն Պամոդոկապետունի անունով գրուածքի իտալացի Գօլտօնի իտալերէն ներկայացմանը, իզմիրի նորահիմն Հայոց ուսումնարանի մէջ, այսատութեամբ Անդրէաս Փափաղեանցի, 1836 թուականին:

Համնելով այն երեսյթին, որ Պէշիքթաշլեանի, Հէքիմեանի, Դուրեանի ողբերգական գրուածքների պեղուն հայոցն է, անուններն և տեղերն նոյնապէս, բայց կեանք, բարք, բնութիւնք, ոգի, շարժուածք, խօսուածք, հագուստ, պատկեր, բեմ, ձեխօսելու և շարժելու ամէնն էլ եւրոպական են և

տեղական և ոչ ասիական կամ բուն հայկական», հեղինակը նշմարում է որ Արևմտեան, այսինքն Պօլսոյ հայերը, չունին ինքնուրոյն հայի կեանքից, հայի ոդով ոչ մի թատերական գրուածք թէ պատմական և թէ ներկայ կեանքից, ալսինքն տեղական կեանքից է Յւ, ինչպէս իրաւացի նկատում է հեղինակը, ուրիշ կերպ և չէր կարող լինել, որովհետեւ Պօլսոյ հայերի կեանքը սկզբում միշտ ենթակայ է եղել օսմանցւոց կեանքին, ոռվորութիւններին, առանի կեանքի եղանակներին և ձևերին, անգամ մայրենի լեզուն տեղ է տուել օսմանցւոց լեզուին, իսկ յետոյ նա ենթարկուել է եւրոպացւոց ազդեցութեան, գլխաւորապէս ֆրանսիացւոց և իտալացւոց, որոնցից և սկսել են ուսանել և թարգմանել թատերական խաղեր, Սորանից յետոյ հեղինակը դառնում է զէպի Արևելեան հայերը, զէպի մեզ, այսինքն Թիֆլիզի թատերական դոյութիւնը և համեմատելով մէկը միւսի հետ, գտնում է որ մենք կովկասարնակ հայերս առաւել պահպանել ենք մեր մէջ հայի բնաւորութիւնը, նորա սովորութիւնները, կեանքի եղանակն, որովհետեւ մենք միշտ կից ենք եղել Հայաստանին և այդպիսութիւնով մեր թատրոնական խաղերը թէ պատմական և թէ տեղական կեանքից վեր առած կը բում են իւրեանց վերայ առաւել ձատութիւն, առաւել՝ այսպէս ասել՝ հայութիւն:

Այսպէս հեղինակը մի կարճառօտ աեսութիւնով նկարագրում է թատրոնի անցեալը և ներկան թէ Արևմտեան և թէ Արևելեան հայերինը: Համակրելով բոլորովին պատուելի հեղինակի յայտնած

կարծիքներին, մենք չենք կարող զանց առնել միտք, որը մեր հասկացողութիւնով ամբաստանում է ճշմարտութեան դէմ:

Պատաւելի հեղինակը հաւատալով հայ թատրոնի յաջողութեանը ապագայում, գտնում է մի մեծ թերութիւն, այն է որ մենք հայերս, առաւելապէս Պօլսոյ հայերը նախապատռում ենք թարգմանութիւնները տեղական պիեսներից, որով կարող ենք ընկնել սիսական մէջ և վասել դորանով հայ թատրոնի ուղղութեանը:

Ճշմարիտ է որ թէ տեղական և թէ պատմական պիեսները կարող են առաւել նպաստել թատրոնի յաջողութեանը, առաւել շատ օգտաւէ տ հայութեան համար մտքեր կարող են արծարծել ժողովրդի մէջ, բայց պէտք է ունենալ այդ տեսակ պիեսներ այնքան կատարեալ ինչքան պահանջնում է առողջ դատողութիւնը, արհեստը և զիտութիւնը, իսկ ինչպէս խոստովանում է հեղինակը, այդպիսի գրուածներ մենք ունենք միայն մէկ քանի հատ տաղանդաւոր պ, Սունդուկեանցի և հանգուցեալ չէր Գըրիգորեանցի զրչի տակից գուրս եկած, որոնք տարաբախտապէս միայն հասկանալի և ձեռնտու են միայն մեզ, Կովկասարնակ հայերիս համար:

Յայտնի է որ ոչ մի ազգութեան թատրոն, ոչ մի երկրում չի սկսել իւր գոյութիւնը առանց ուրիշներից վերցրած, օրինակի և չի կատարելագործուել իսկոյն առանց մէկ երկար փշոտ ճանապարհ անցնելու, ամբողջ մէկ կամ երկու դար տեւելուց յետոյ:

թէ մօտաւոր անցեալում և թէ ներկայում Փը-

րանսիացւոց թատրոնը եղել է և կը լինի գուցէ  
շատ երկար ժամանակ ուզեցոյց ամեն ազգերի  
թատրոնների, անգամ գերմանացւոց, այդ բաղմա-  
թիւ ու կատարեալ կուլտուրային ազգի թատրո-  
նինը,

Սկսենք անգամ Անդլիայից, որը եթէ չձնէր  
Եկապլիրին, գուցէ Ֆրանսիան չստեղծէր Մօլիեր և  
Ռասինը, չլինէին սոքա, գուցէ չէին երեալ եր-  
կու հզօր և հսկայ թատրոնական հանճարները՝  
Գեօտէն և Շիլերը,

Ուրեմն Ֆրանսիան հետեւ է Անդլիային, գեր-  
մանիան Ֆրանսիային ու Անդլիային, իսկ մենք  
մեծ ազգութեանց հետ կից ապրող թզուկաձև աղ-  
գութիւններս, հետեապէս պիտի գիմենք այդ ազ-  
գութիւններին և առնենք նորանցից օրինակ.

Քանի որ չունինք ինքնուրոյն կատարեալ թատ-  
րոնական գրուածներ, հարստացնենք մեր ըէպէր-  
տուարը՝ մատարեալ թարգմանութիւններով, ո-  
րոնք՝ յուսով պիտի լինենք, որ կը ստեղծեն կա-  
տարեալ ինքնուրոյն գրուածներ, կը ծնեցնեն տա-  
զանդաւոր հեղինակներ ու գերասաններ

Վերջացնելով մեր խօսքը, կրկնում ենք, որ շատ  
զո՞ւ և ուրախ կը լինէինք եթէ պ, Ալդարեգեանի  
գեղեցիկ գրուածքի նման տեսութիւններ շատ ե-  
րեային, որոնք շատ ազդու կերպով պիտի նպաս-  
տեն մեր մանուկ հայ թատրոնի յաջողութեանը



«Ազգային գրադարան



NL0153181

